



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

233-Ա/2

07.03.2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 1126-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի նոյեմբերի 11-ի <<2016-2017 ուսումնական տարվա գիտելիքների ստուգման, պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը>> հաստատելու մասին N 1126-Ա/2 հրամանի հավելվածի՝

12-րդ կետի 21-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ.
<<21) Հաստատությունները «Հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Օտար լեզու» առարկաների բանավոր քննությունների հարցաշարերը կամ հարցատոմսերը ստանում են «Կրթություն» շաբաթաթերթից կամ ԳԹԿ կայքից: «Հայ գրականություն» և «Օտար լեզու» առարկաների քննական առաջադրանքների հարցաշարերը և հարցատոմսերը կազմվում են 7-9-րդ դասարանների ծրագրային նյութից, «Հայոց պատմություն» առարկայի քննական առաջադրանքների հարցաշարերը և հարցատոմսերը կազմվում են 6-9-րդ դասարանների ծրագրային նյութից:>>:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՅԱՆ